## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«03» հոկտեմբերի, 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ

**1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

**«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

Ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց, որ **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունները՝ **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ի մասնակցության իրավունքը և ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և

Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ին,

2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),

3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, իրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------- Էդգար Մելքոնյան

Անդամներ՝ ---------------- Կարեն Մելքոնյան

---------------- Էդգար Տոնականյան

---------------- Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ ---------------- Օֆելյա Ասատրյան